Արձանագրություն N2

ՀՀ Ազգային ժողովի կողմից համակարգչային և ռադիո սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

18 ապրիլի 2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ս. Մարգարյան, Գ. Խաչիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Ավագյան

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և էլ. հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցե
1	«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ	retro.tender@mail.ru
2	Ա/Ձ Տիգրան Սամվելյան Արմենակի	tisamvel@yahoo.com
3	«Մելինեթ» ՍՊԸ	info@melinet.net
4	«Նովա Թրեյդ» ՍՊԸ	novatradeam@gmail.com

2. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ մասնակիցների հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:

Մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են կից Հավելված 1-ում:

4.Նիստը կասեցնելու վերաբերյալ

Հանձնաժողովը հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մելինեթ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկներն Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժնների մասով, իսկ «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկն Ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գները՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով ***որոշեց***՝ նիստը կասեցնել՝ Ընթացակարգի նշված չափաբաժինների մասով առաջարկված գների նվազեցման նպատակով բավարար գնահատված մասնակիցներ՝ «Մելինեթ» ՍՊԸ-ին և «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների 26.04.2019թ. ժամը 12:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում /ընդունարան/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը վերսկսելու և գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցությունների վարման վերաբերյալ

2019 թվականի ապրիլի 26-ին ժամը 12:30-ին միաժամանակյա բանակցությունների վարման նիստին պատշաճ ծանուցված լինելով «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ն չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«Մելինեթ» ՍՊԸ-ի տնօրենը մասնակցելով նիստին իր կողմից Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների համար առաջարկված գները թողեց անփոփոխ:

6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ընթացակարգի՝

- 6-րդ չափաբաժնի մասով՝ «Մելինեթ» ՍՊԸ-ին,
- 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով՝ Տիգրան Սամվելյան Արմենակի Ա/Ձ-ին,
- 11-րդ չափաբաժնի մասով՝ «Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին,
- 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ին:

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ընթացակարգի՝

- 11-րդ չափաբաժնի մասով՝ Տիգրան Սամվելյան Արմենակի Ա/Ձ-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7.Հայտերը մերժելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ մերժել «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով և «Մելինեթ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Ընթացակարգը մի քանի չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝

- Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, և 14-րդ, չափաբաժինները հայտարարել չկայացած:
- Ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «Մելինեթ», «Նովա Թրեյդ», «Ռետրո Ֆիլինգս»

ՍՊԸ-ների և Տիգրան Սամվելյան Արմենակի Ա/Ձ-ի հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

10. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել Ընթացակարգի առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

11. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 03.05.2019թ. ժամը 11:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Գ. Խաչիկյան

_____ Ս. Մարգարյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան

ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգի Հավելված 1

Չափաբաժիններ	«Նովա Թրեյդ» ՍՊԸ			Ռետրո Ֆիլինգս ՍՊԸ			Տիգրան Սամվելյան Արմենակի Ա/Ձ			Մելինեթ ՍՊԸ			Նախահաշվային գին
	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	
1													72000
2													64000
3										160875	32175	193050	140000
4										896625	179325	1075950	700000
5										1691400	338280	2029680	1120000
6										846000	169200	1015200	1050000
7										840000	168000	1008000	280000
8										823800	164760	988560	416000
9							73000	0	73000				80000
10							234000	0	234000				250000
11	299000	0	299000	408000	0	408000	330000	0	330000				420000
12				28000	0	28000							32000
13				28000	0	28000							32000
14				408000	0	408000							290000